

ԲԱԴՄԻՆՏՈՆԻ ԴԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ս.Ս. Հակոբյան, Ա.Ա. Շալջյան,
Ռուս-Հայկական համալսարան,
Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Բադմինտոն, սոցիոլոգիական հարցում, հիմնախնդիր, դրդապատճառ, ենթակառուցվածք, ուսումնական գործընթաց:

Հետազոտության արդիականություն: Բադմինտոնը՝ որպես խաղային մարզաձև, ունի համակողմանի և ներդաշնակ ազդեցություն անձի շարժողական կարողությունների մշակման վրա: Այն նպաստում է ուսանողների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական պատրաստվածությանը՝ ապահովելով կյանքի արժեքավոր հմտությունների ձեռքբերմանը, մարզական հմտությունների կատարելագործմանը և ուսումնական գործընթացի արդյունավետության բարելավմանը: Չնայած մարզաձևի դրական ազդեցությանը՝ ուսանողների ֆիզիկական և հոգեբանական վիճակի ներդաշնակ զարգացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի կարծիքով բադմինտոնի մասսայականացման հեռանկարները բուհերում ներկայումս անորոշ են: Բադմինտոնի զարգացման հիմնական խոչընդոտներն են՝ մարզա-

բազաների սահմանափակ առկայությունը, անհրաժեշտ գույքի և նեղ մասնագետների պակասը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և բացահայտել բադմինտոնի արդի վիճակը բուհական ֆիզիկական դաստիարակության համակարգում և նախանշել այն հետագայում ընդլայնելու միտումները:

Հետազոտության խնդիրները:

1. Բացահայտել բուհական համակարգում բադմինտոն մարզաձևի ընդգրկվածության աստիճանը ուսումնական գործընթացում:

2. Նախանշել ուղիներ ուսանողների շրջանում մարզաձևի մասսայականացմանը և այն բարելավելու ուղղությամբ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն, սոցիոլոգիական հարցում, ստացված արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության նպատակի և խնդիրների իրականացման նպատակով անցկացրել ենք սոցիոլոգիական հարցում: Կազմել ենք հարցաթերթիկներ բուհում սովորող ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ:

Հետազոտությունը կազմակերպել և անցկացրել ենք երեք փուլով:

Առաջին փուլում (մարտ-հունիս 2024թ.) ուսումնասիրել ենք հիմնախնդրի վերաբերյալ անհրաժեշտ գրական աղբյուրներ:

Երկրորդ փուլում (հոկտեմբեր-դեկտեմբեր 2024թ.) կազմել ենք անանուն հարցաթերթիկներ երկու խումբ հարցվողների (ուսանողների և դասախոսների) համար և անցկացրել ենք սոցիոլոգիական հարցումներ:

Երրորդ փուլում ամփոփել ենք հետազոտության արդյունքները, վերլուծել ենք այն և տվել համապատասխան գնահատական:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել է Ռուս-Հայկական համալսարանի (ՌՀՀ) 1-ին և 2-րդ կուրսի 120 ուսանող (60 ուսանող 1-ին կուրս, 60-ը՝ 2-րդ կուրս) և 20 դասախոս:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ի՞նչ է բաղմինտոն բառի բուն իմաստը: Անգլերենից թարգմանաբար «բաղմինտոնը» նշանակում է զովացուցիչ մրգային ըմպելիք: Այդ համեղ ըմպելիքն առաջին անգամ ի հայտ

է եկել Լոնդոնից ոչ հեռու՝ Գլոսթերշիրի կոմսությունում գտնվող Բադմինտոն փոքրիկ քաղաքում [1, 2, 10]:

XIX դարում Հնդկաստանում ծառայող անգլիացի սպաները սկսեցին հետաքրքրվել պունա հին հնդկական խաղով, որը կարելի է համարել ժամանակակից բադմինտոնի նախատիպը: Անգլիացիները խաղի հանդեպ ունեցած կիրքն իրենց հետ բերեցին հայրենիք: Խաղի ժամանակակից ավանդույթը սկիզբ է առնում Անգլիայում՝ Բադմինտոն Հաուսի հնագույն կալվածքում, որի սեփականատերը՝ սպորտի հայտնի սիրահար և սպորտի մասին մի շարք գրքերի հրատարակիչ Ջաուլզ Սոմերսեթը՝ Բոֆորտի VIII դուքսը, 1873թ. կառուցել է բաղմինտոնի առաջին կորտը [6,10]:

Ինչու՞ է այս խաղն այդքան գրավիչ: Հավանաբար, դրա առաջին առավելությունը զարմանալի մատչելիությունն է: Կարելի է խաղալ ուր ասես՝ զբոսայգում, տան բակում, անտառի բացատում և այլն: Բաղմինտոնը իր առանձնահատկությամբ միաժամանակ և պարզ, և բարդ մարզաձև է [2, 9]:

Բաղմինտոնում խաղային գործունեության բազմազանությունը պահանջում է շարժողական ընդունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացում, օրգանիզմի բոլոր համակարգերի ֆունկցիոնալ կարողությունների կատարելագործում: Ֆիզիկական

պատրաստվածությանը համատեղ ուշադրություն է դարձվում նաև բաղմինտոնի մասնագիտական որակների զարգացմանը [3, 7]:

Կոլմեյցևան (2019) նշում է. բաղմինտոն խաղացողը պետք է օժտված լինի մենապայքարողի բնավորությամբ, խաղացողի մարտավարական մտածողությամբ, մարզիկի տոկունությամբ, շախմատիստների՝ քայլերի համակցությունները կանխատեսելու կարողությամբ և այդ ամենը՝ սեղմ ժամանակահատվածում [4]:

Բաղմինտոնի ներառումը ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացում նպաստում է ուսանողների մոտ առողջ ապրելակերպի արժեքի նկատմամբ մոտիվացիայի և

պահանջմունքի ձևավորմանը, անձի հիմնական շարժողական ընդունակությունների և հոգեբանական հատկությունների մշակմանը, ինչպես նաև ֆիզիկական մշակույթի ստեղծագործական կիրառմանը, առողջ ապրելակերպի կազմակերպմանը [5, 8]:

Հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության և հավաստի տվյալներ ակնկալելու նպատակով կազմել ենք անանուն հարցաթերթիկներ:

Այն հարցին, թե Դուք խաղացել եք բաղմինտոն՝ ՌՀՀ-ի 1-ին կուրսի հարցվողների 16%՝ այո, 72%՝ ոչ, 12%՝ այլ պատասխան, իսկ 2-րդ կուրսի ուսանողների 21% պատասխանել է այո, 63%՝ ոչ, 16%՝ տվել այլ պատասխան (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բաղմինտոն խաղացողների թիվն ուսանողների շրջանում

		1-ին կուրս, n = 60		2-րդ կուրս, n = 60	
		պատասխան	տոկոս	պատասխան	տոկոս
1.	այո	10	16%	13	21%
2.	ոչ	43	72%	38	63%
3.	այլ պատասխան	17	12%	9	16%

Երկրորդ հարցին՝ բաղմինտոնով զբաղվելու Ձեր հիմնական դրդապատ

ճառներն ամփոփված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Բաղմինսրոնով պարապելու հիմնական դրդապատճառները

	Հարցվողների պատասխանները	1-ին կուրս, n =60		2-րդ կուրս, n =60	
		պատասխան	տոկոս	պատասխան	տոկոս
1.	առողջության ամրապնդում	24	37%	25	41%
2.	Ֆիզիկապես ավելի ամրակազմ	15	26%	13	22%
3.	կնպաստի մարմնակազմությանը	6	10%	7	12%
4.	աշխատունակության բարելավում	5	8%	6	10%
5.	կամային որակների դաստիարակում	10	18%	9	16%
6.	ինքնավստահություն	16	27%	18	30%
7.	հաճույք	23	38%	18	30%
8.	մրցակցություն	10	17%	12	20%
9.	այլ պատասխաններ	10	17%	14	23%

Այս հարցի շուրջ երկու կուրսերի ուսանողների պատասխաններում մենք նկատում ենք զգալի տատանումներ, 1-ին կուրսի ուսանողները հակված են ֆիզիկապես ամրակազմ լինելուն (26%) և հաճույք ստանալուն (38%), իսկ 2-րդ կուրսի ուսանողների մոտ գերակշռում են հետևյալ պատասխանները՝ առողջության ամրապնդում (41%), կնպաստի մարմնակազմությանը (12%), աշխատունակությանը (10%), ինքնավստահությանը (10%) և այլն: Մեր կարծիքով դա պայ-

մանավորված է սովորելու ժամանակահատվածով, բուռի նյութատեխնիկական և ենթակառուցվածքների բավարարվածությամբ և ուսանողների շրջանում բաղմինտոն մարզաձևի պրոպագանդայով:

Մեզ շատ էր հետաքրքրում այն հարցը, թե որքանով է ֆիզիկական կուլտուրան և, մասնավորապես՝ բաղմինտոնը նպաստում ուսումնական գործընթացին: Արդյունքներն ամփոփված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

**Բաղմինսրոնի ազդեցությունն ուսանողների ուսումնական
գործընթացում**

	Հարցվողների պատաս- խանները	n =120	
		պատասխան	տոկոս
1.	հաճախումներ	26	21%
2.	ակտիվություն	16	14%
3.	առաջադիմություն	22	18%
4.	այլ պատասխաններ	56	48%

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողների գրեթե կեսը՝ 48%, դեռ չեն պատկերացնում բաղմինսրոն մարզաձևի ազդեցությունն իրենց ուսումնական գործընթացում, ուստի պատասխաններում լիարժեք չեն կարողանում կողմնորոշվել:

Գիտական հետազոտություններում ընդունված է այն թեզը, որ երբ միևնույն երևույթն ուսումնասիրվում է տարբեր ռեսպոնդենտների հարցման միջոցով, այն թույլ է տալիս ստանալ ավելի օբյեկտիվ ինֆորմացիա ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ: Այդ նկատառումով հարցում ենք անցկացրել պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում, որոնց մենք դիտարկում ենք որպես փորձագետներ:

Մեր այն հարցին, թե ինչպե՞ս եք վերաբերվում ուսանողների ներգրավվածությանը մշտապես ֆիզիկական կուլտուրայով և սպորտով, մասնավորապես՝ բաղմինսրոնով զբաղվելուն,

նրանց 86% տվել է դրական պատասխան, 9%՝ չի կողմնորոշվում, և 5%՝ դեմ է:

Մեր հաջորդ հարցն անմիջականորեն ուղղված էր՝ բացահայտելու, թե արդյո՞ք բաղմինսրոնով պարապող ուսանողների քանակը բուհերում աճելու հեռանկար ունի: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 16% այն կարծիքին է, թե այն ունի զարգացման հեռանկար, 84% գտնում է, որ ելնելով բուհերի ուսումնական ծրագրերից, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական միջոցների առկայությունից, մասնագետների ոչ բավարար պատրաստվածության մակարդակից և պայմանավորված այլ գործոններով՝ այս պահին զարգացման հեռանկարները տեսանելի չեն:

Եզրակացություն: Ելնելով թեմային առնչվող գրական աղբյուրների ուսումնասիրությունից, մեր կողմից ան-

ցկացված հետազոտությունների արդյունքների ամփոփումից և վերլուծությունից՝ հանգեցինք հետևյալ եզրահանգմանը.

1. Դեռ վաղ է խոսել բուհերում բադմինտոնով զբաղվողների ներգրավվածության հեռանկարների մասին, քանզի առկա են բազում գործոններ, որոնք չեն նպաստում այդ գործընթացին:

2. Համեմատելով ՌՀՀ-ի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների՝ բադմինտոնով պարապելը, ակնառու է ՌՀՀ-ի 2-րդ կուրսի ուսանողների առավելությունը, որը պայմանավորված է սովորելու ժամանակահատվածով, ուսանողների ակտիվությամբ:

3. Բադմինտոնի ներառումը բուհական ֆիզիկական կրթական ծրագրերում կարող է դրական ազդեցություն ունենալ ուսանողների ընդհանուր զարգացման վրա՝ խթանելով սպորտով և առողջ ապրելակերպով նրանց հետաքրքրվածությունը:

Գործնական առաջարկություն:

Ուսանողական մարզական ֆեդերացիայի ղեկավարությանը մեր կողմից առաջարկվեց մարզաձևն ընդգրկել ուսանողական խաղերի ծրագրում, որը և իրականացվեց 2025 թվականի ՀՀ 26-րդ ուսանողական խաղերում:

■ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лифшиц В., Галицкий А., Бадминтон. Книга – 2-е издание. Москва: «Физкультура и спорт». 1984 –176 с.

2. Гутко А.В., История развития бадминтона в стране и за рубежом. Методическое пособие. Нижний Новгород: ННГУ. 2004 –22 с.

3. Илькевич К.Б., Панин М.Ю., Развитие физических качеств студентов – бадминтанистов (статья). Материалы научно-практической конференции «Молодежь России в условиях преодоления последствий глобального кризиса».- Люберцы: Ф-л РГСУ, 2010 – с. 22-29

4. Щербаков А.В., Бадминтон. Спортивная игра: Учебно-методическое пособие.-М: Советский спорт, 2010.- 156 с.

5. Илькевич К.Б., Физическая подготовка бадминтониста в вузе. Материалы II Международной научно-практической конференции «Образование, наука, культура», - Гжель: ГГХПИ, 2012 – с. 212-220

6. Помыткин В.П., Книга тренера по бадминтону. Теория и практика.-ОАО «Первая образцовая типография», 2012.- 344 с.

7. Гутко А.В., Физическая подготовка бадминтониста. Учебно-методическое пособие. Национальный исследовательский Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского. 2017–23 с.

8. Коломейцева Е.Б., Физическая культура. Бадминтон: особенности общей физической подготовки. Пермь. 2019– 102 с.

9. Чебан Т.Н., Самолук О.И., Мамков О.М., Спивак И.А., Шишкану Л.И., Скубий Ю. А., Кольцов Д.Н., Бадминтон и методика преподавания. Учебно-методическое пособие. Тирасполь: Издательство Приднестровского университета. 2023 – 102 с.

10. Википедия. Бадминтон – история. Доступно по ссылке: <http://www.ru.wikipedia.org/wiki/Бадминтон#история>

THE ROLE OF BADMINTON IN THE SYSTEM OF STUDENTS' PHYSICAL EDUCATION

*S.S. Hakobyan, A.A. Shaljyan,
Russian-Armenian University,
Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: badminton, sociological survey, issue, motivation, infrastructure, educational process.

Research relevance: As a game-based sport, badminton has a comprehensive and harmonious impact on the development of motor skills. It contributes to the physical, psychological, and social preparedness of students, helping them acquire valuable life skills, improve athletic abilities, and enhance the effectiveness of the educational process.

Research aim: To study and reveal the current state of badminton in the university system and to outline trends for its future expansion.

The research was conducted in three stages:

- **First stage (March–June 2024):** Study of relevant literature sources.
- **Second stage (October–December 2024):** Development of anonymous questionnaires for two respondent groups (students and lecturers), followed by sociological surveys.

• **Third stage:** Summarizing and analyzing the research results, with appropriate evaluation.

Research methods and organization: To achieve the stated objectives, the following methods were used:

1. Study of available literature sources
2. Sociological survey
3. Mathematical and statistical analysis of obtained results

Research result analysis: A sociological survey conducted among 120 first- and second-year students of the Armenian-Slavic University revealed that only 16% and 21%, respectively, play badminton. Of the main reasons for playing this sport, first- and second-year students noted the health improvement factor: 37% and 41% of responses, respectively. Further, students noted strengthening their physique as a reason for playing badminton: 26% and 22% of responses.

Conclusion: Based on the review of relevant positive literature and the analysis of our research results, we came to the following conclusions:

1. It is still too early to speak about prospects for widespread involvement in badminton in universities, as there are numerous hindering factors.
2. Incorporating badminton into university physical education programs can positively affect students' overall development by encouraging interest in sports and a healthy lifestyle.

РОЛЬ БАДМИНТОНА В СИСТЕМЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ СТУДЕНТОВ

С.С. Акопян, А.А. Шалджян,
Российско-Армянский университет,
Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: бадминтон, социологический опрос, проблема, мотивация, инфраструктура, учебный процесс.

Актуальность исследования: Бадминтон как игровая спортивная дисциплина оказывает всестороннее и гармоничное влияние на развитие двигательных способностей личности. Он способствует физической, психологической и социальной подготовке студентов, способствует приобретению жизненно важных

навыков, совершенствованию спортивных умений и повышению эффективности учебного процесса.

Цель исследования: Изучить и выявить текущее состояние бадминтона в системе высшего образования и наметить тенденции его дальнейшего развития.

Исследование проводилось в три этапа:

• **Первый этап (март–июнь 2024 г.):** Изучение соответствующей литературы.

• **Второй этап (октябрь–декабрь 2024 г.):** Составление анонимных анкет для двух групп респондентов (студенты и преподаватели) и проведение социологических опросов.

• **Третий этап:** Подведение итогов исследования, анализ результатов и формулирование оценок.

Методы и организация исследования: Для реализации поставленных задач использовались следующие методы:

1. Изучение доступных литературных источников
2. Социологический опрос
3. Математический и статистический анализ полученных данных

Анализ полученных результатов. Социологический опрос, проведенный среди

120 студентов 1-го и 2-го курсов Армяно-славянского университета выявил, что лишь соответственно 16 % и 21% занимаются бадминтоном. Из основных причин занятий этим видом спорта студенты 1-го и 2-го курсов отметили фактор укрепления здоровья: соответственно 37 и 41% ответов. Далее студенты как причину занятий бадминтоном выделили укрепление телосложения: 26 и 22% ответов.

Краткие выводы: На основе анализа положительных источников по теме и результатов собственного исследования были сделаны следующие выводы:

1. Пока рано говорить о перспективах широкого вовлечения студентов в бадминтон в вузах, поскольку существуют многочисленные препятствующие факторы.

2. Включение бадминтона в программы физического воспитания вузов может положительно сказаться на общем развитии студентов, способствуя их интересу к спорту и здоровому образу жизни.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սամսոն Սուրիկի Հակոբյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի պրոֆեսոր, Ռուս-Հայկական համալսարան, Երևան, Հայաստան, E.mail: samson.hakobyan@sportedu.am

Ալինա Արտաշեսի Շալյան՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի ավագ դասախոս, Ռուս-Հայկական համալսարան, Երևան, Հայաստան, E.mail: alinashaljian2023@gmail.com

Information about the authors

Samson Suriki Hakobyan – PhD in Pedagogy, Professor at the Department of Physical Education and Healthy Lifestyle, Russian-Armenian University, Yerevan, Armenia,

E-mail: samson.hakobyan@sportedu.am

Alina Artashes Shaljian – Senior Lecturer at the Department of Physical Education and Healthy Lifestyle, Russian-Armenian University, Yerevan, Armenia,

E-mail: alinashaljian2023@gmail.com

Հոդվածն ընդունվել է 13.06.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 14.06.2025–ին:

Գրախոս՝ դոցենտ Յու. Գրիգորյան